



Empowered lives.
Resilient nations.

« քննադատության նախարարություն
« քաղաքաշինության նախարարություն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 05

«Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱՁԾ-ԳԷՖ/00059937 ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացին աջակցող միջգերատեսչական մշտական գործող աշխատանքային խմբի նիստի

« քաղաքաշինության նախարարության խորհրդակցությունների դահլիճ
Օգոստոսի 28, 2013թ.

Մասնակցում էին՝

Ռ.Ալավերդյանը, « քաղաքաշինության նախարարի տեղակալ-նախագահ

Աշխատանքային խմբի անդամներ՝

Ս.Սրապյանը, Լ.Քոսյանը, Մ.Ծառուկյանը, Հ.Բադալյանը, Հ.Տեր-Գաբրիելյանը, Կ.Գևորգյանը, Ա.Ջաքարյանը, Ա.Կարապետյանը:

Հրավիրված էին՝

Ե.Աթայանը, Ա.Մովսիսյանը, Կ.Մխոյանը, Վ.Ջալալյանը, Ա.Նազարյանը:

Օրակարգում՝

1. «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱՁԾ-ԳԷՖ/00059937 ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) 1-ին բաղադրիչի կատարման ընթացքի մասին:
2. Ծրագրի շրջանակներում մշակված «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների ցուցումների» քննարկում:

Հարց 1

Ծրագրի փորձագետ Ա.Կարապետյանը ներկայացրեց օրակարգի առաջին հարցը, Ծրագրի 1-ին բաղադրիչի՝ «էներգաարդյունավետության սկզբունքների վրա հիմնված շինարարական նորմերի ու կանոնների և ստանդարտների մշակում և կիրարկում», շրջանակներում կատարված աշխատանքների ընթացքը:

Նշվեց, որ Ծրագրի 1-ին բաղադրիչի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Շենքերի էներգաարդյունավետությանը վերաբերող իրավանորմատիվային դաշտի վերլուծություն:
- « քաղաքաշինության նախարարության կոլեգիայի նիստում քննարկվել և հավանության է արժանացել Ծրագրի կողմից առաջարկված էներգաարդյունավետ շինարարական նորմերի բարելավման ուղիները՝
 - «Շենքերի ջերմային պաշտպանություն» ՄՍՆ-ԵՆ ներդաշնակեցումը,

- «Շենքեր, շինություններ, շինարարական նյութեր. Անվտանգություն» տեխնիկական կանոնակարգի մշակումը:
- ՌԴ շինարարական ֆիզիկայի ԳՀԻ (НИИСК) խորհրդատվություն է տրամադրել միջպետական նորմերի ու ՏԿ տեղայնացման/մշակման գծով:
- Մշակվել է «Քաղաքաշինության բնագավառում էներգաարդյունավետության ոլորտի կայացման և զարգացման համար անհրաժեշտ իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումներին ուղղված միջոցառումների» նախագիծը
 - դրա հիման վրա պատրաստվել են «Քաղաքաշինության մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:
- Մշակվել է «ՀՀ-ում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների ցուցումները»:
- Ներդաշնակեցման փուլում են «Շենքերի էներգետիկ արդյունավետության մասին» ԵՄ դիրեկտիվը և դրան աջակցող վեց ստանդարտները:
- Մշակվել է «Շենքի էներգետիկ անձնագիր» ազգային ստանդարտի նախագիծը:
- Հրապարակվել է ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանությունը»:
- Մշակվել է «Շենքեր, շինություններ, շինարարական նյութեր. Անվտանգություն» տեխնիկական կանոնակարգի նախագիծը: Ընդ որում, նշվեց, որ կանոնակարգը քննարկվել է ՀՀ կառավարության բնապահպանության և տարածքային զարգացման նախարարական կոմիտեի ս.թ. ապրիլի 16-ի նիստում և մերժվել է: Կարևորելով կանոնակարգի ընդունման անհրաժեշտությունը մասնակիցների կողմից առաջարկվեց ճշտել մերժման պատճառը, մշակել լրացուցիչ հիմնավորումներ, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակել նախագիծը:

Ռ.Ալավերդյանը և Ե.Աթայանը առաջարկեցին հակիրճ ներկայացնել նաև Ծրագրի մյուս բաղադրիչների շրջանակներում կատարված աշխատանքները, մասնավորապես ՀՀ համայնքներում էներգաարդյունավետ անհատական բնակելի տների բազմակի օգտագործման նախագծերի կատալոգի մշակումը, ինչպես նաև կազմակերպվելիք ուսուցողական և տեղեկատվական սեմինարները: Վ.Ջալալյանը ներկայացրեց համապատասխան տեղեկատվություն այդ աշխատանքների վերաբերյալ:

Ա.Կարապետյանը հավելեց, որ դեռևս 2008 թվականին «Քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00035799 ծրագրի շրջանակներում մշակվել էին «Ջերմային ցանցեր» ՄՍՆ 4.02-02-2004, «Սարքավորանքի և խողովակաշարերի ջերմամեկուսացում» ՄՍՆ 4.02-03-2004, և «Շենքերի ջերմային պաշտպանություն» ՄՍՆ 2.04-02-2004: Դրանցից առաջին երկուսը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն, սակայն դրանց պետական գրանցումը նախարարության կողմից մերժվել է պատճառաբանելով, որ դրանցով ամրագրված պահանջները չեն բխում ՀՀ Սահմանադրությունից կամ օրենքի պահանջներից: Ինչ վերաբերում է «Շենքերի ջերմային պաշտպանություն» ՄՍՆ 2.04-02-2004 միջպետական շինարարական նորմերին, ապա Վ.Ջալալյանը նշեց, որ դրանք վերանայվել են ԱԴՀ երկրների շինարարությունում ստանդարտացման, տեխնիկական նորմավորման և սերտիֆիկացման միջպետական գիտատեխնիկական հանձնաժողովի կողմից և ներկայումս առկա է նշված նորմերի վերանայված տարբերակի տեղայնացման խնդիր:

Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները խմբի անդամների կողմից գնահատվեց դրական և առաջարկվեց ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

Քննարկվեցին նաև Ա.Մովսիսյանի կողմից բարձրացված հետևյալ հարցերը. (1) հանրապետությունում շենքերի էներգետիկ աուդիտի համար սերտիֆիկացման մարմինների և լաբորատորիաների առկայության, ինչպես նաև վերջիններիս համատասխան սարքավորումներով հագեցվածության, (2) օրենսդրական բարեփոխումների ընթացքում տնտեսական խթանների ներառման, և (3) շինարարության ընթացքում կիրառվող առավել տարածված՝ քարե շարվածքի (օր.՝ միդիս) ջերմային պաշտպանության ցուցանիշները գործող շինարարական նորմերին համապատասխանության ապահովման մասին: Ծրագրի կողմից ներկայացվեցին համապատասխան պարզաբանումներ բարձրացված հարցերի վերաբերյալ և քննարկման արդյունքներով Ա.Մովսիսյանը առաջարկեց Ծրագրին՝ (1) աջակցել «Հայսեյսմշին և ԿՊԳՀԻ» ԲԲ ընկերությանը շենքերի էներգետիկ աուդիտի համար լաբորատորիայի ստեղծման և շահագործման հարցում, (2) կազմակերպել պրակտիկ աշխատանքներ ներառող ուսուցողական դասընթացներ քաղաքաշինության պետական տեսչության, նախագծողների, շինարարության որակի տեխնիկական հսկողություն և փորձաքննություն իրականացնող մասնագետների համար:

Ռ.Ավվերդյանը առաջարկեց նաև Ծրագրին աջակցել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագծի էներգախնայողությանը վերաբերող հոդվածի պահանջների կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի ցանկի և դրանց մշակման ժամանակացույցի հստակեցման հարցում:

Հարց 2

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց Ծրագրի փորձագետ Ա.Նազարյանը և տեղեկացրեց, որ «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների ցուցումները» քննարկվել են մի շարք մասնագիտական կազմակերպություններում, շահագրգիռ մարմիններում, ՀՀ քաղաքաշինության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում: Ներկայացված առաջարկությունները հիմնականում հաշվի են առնվել ցուցումների լրամշակման ժամանակ:

Մասնակիցները նշեցին ներկայացված ցուցումների օգտակարությունը նախագծողների, կառուցապատողների և մասնագետների համար՝ որպես խորհրդատվական (օժանդակ) բնույթի նյութ և առաջարկեցին այն սահմանված կարգով դնել կիրառության մեջ:


Կ.Մխոյանը առաջարկեց ներկայացված փաստաթղթի անվանման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես հանել «տեխնիկական լուծումներ» և «ցուցումներ» բառերը:

Քննարկման արդյունքներով առաջարկվեց «ցուցումներ» բառը փոխարինել «խորհրդատվական ձեռնարկ» բառերով: Առաջարկությունը ընդունվեց միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից:

Որոշվեց՝


1. Ընդունել ի գիտություն Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
2. Հավանություն տալ Ծրագրի շրջանակներում մշակված «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների խորհրդատվական ձեռնարկին» և երաշխավորել այն ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից սահմանված կարգով կիրառության մեջ դնելու համար, որպես խորհրդատվական (օժանդակ) բնույթի նյութ:
3. Առաջարկել Ծրագրին ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ կազմակերպել 2-րդ կետում նշված ձեռնարկի ներկայացման սեմինար՝ համապատասխան լսարանի համար:
4. Առաջարկել Ծրագրին ներկայացնել «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագծի էներգախնայողությանը վերաբերող հոդվածի պահանջների կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի ցանկը և դրանց մշակման ժամանակացույցը:
5. Կարևորելով «Շենքեր, շինություններ, շինարարական նյութեր. Անվտանգություն» տեխնիկական կանոնակարգի ընդունման անհրաժեշտությունը միջոցներ ձեռնարկել կանոնակարգի ընդունման ուղղությամբ:

Աշխատանքային խմբի ղեկավար՝



Ռ. Ավավերյան

Աշխատանքային խմբի քարտուղար՝



Ա. Կարապետյան